

Գ. Արաքս

30.01.2019թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ /ԱՐՄ/ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018թ. ՏԱՐԵԿԱՆ / ՀՈՒՆՎԱՐ- ԴԵԿՏԵՄԲԵՐ/ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ ` ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ վարչության գլխավոր մասնագետ` Գ. Սուքիասյանի, համայնքի ավագանու և համայնքի 65 բնակիչների.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս /Արմ/գյուղական համայնքի ղեկավարը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական , ենթաօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին >>, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի , ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով, իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում ` իր լիազորությունները:

2018թ.-ին համայնքապետարանի աշխատանքային ծրագրերի հիմքում դրված են եղել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը` համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է , որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ- տնտեսական խնդիրները , որոնք լուծվել են 2018թ.-ին: Այս խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ , որոնք ըստ բնագավառների ներկայացնում ենք Ձեզ:

Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում.

- Կատարվել է համայնքի բնակիչների ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկելվելու փաստագրման աշխատանքները:
- Նոտարական գրասենյակում , ՔԿԱԳ –ի բաժնում, անձնագրային բաժնում , կադաստրի տարածքային ստորաբաժանում 115 անգամ միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:
- Տրվել է 502 տեղեկանքներ, 96 պաշտոնական գրություն, համայնքի ղեկավարի 113 որոշում , համայնքի ղեկավարի 4 կարգադրություն, ավագանու 6 նիստ , ավագանու 25 որոշում:

Համայնքի ղեկավարի գործունեությունը պաշտպանության բնագավառում.

- Աջակցել է պատերազմի վետերանների և զոհված , հաշմանդամ ազատամարտիկների սոցիալական խնդիրների լուծմանը.
- Նախապատրաստական աշխատանքներ է տարվել ձմեռային և ամառային զորակոչի համար , կատարվել է Արմավիրի մարզպետի կողմից ավանդույթ դարձած ձմեռային և ամառային զորակոչերին նվիրված միջոցառումները Սարդարապատի հուշահամալիրում:

Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում.

- Համայնքի ղեկավարը անմիջական վերահսկողություն է իրականացրել համայնքի սեփականություն համարվող հողերի , ֆիզիկական անձանց պատկանող հողերի նպատակային օգտագործմանը.
- Կատարվել է համայնքի սեփականաշնորհված հողերի և շենքերի առաջին պետական գրանցման վկայականների աշխատանքները:
- Հաստատվել է համայնքի հողային հաշվեկշիռը:

Համայնքի ղեկավարի գործունեությունը կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում.

- Կազմակերպել է համայնքի բոլոր փողոցների աղբահանությունը:
- Կատարվել է համայնքի խմելու ջրի խողովակաշարի առանձին հատվածների վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև խմելու ջրի քլորացման աշխատանքներ
- 2018թ.-ին լուծվեց համայնքի բոլոր փողոցների լուսավորությունը:

Համայնքի ղեկավարի գործունեությունը տրանսպորտի , առևտրի և սպասարկման բնագավառում.

- Կազմակերպել է համայնքային ենթակայության 4.5 կմ երկարության ճանապարհների երկու կամուրջների պահպանման աշխատանքները:

- Մշակել է առևտրի , հասարական սննդի և սպասարման ոլորտի գործունեության համայնքային կանոնները:
- Վերահոսկողություն սահմանել չնախատեսված վայրերում և առանց սառնարանային պայմանների՝ հատկապես արագ փչացող սննդամթերքի / կաթնամթերք, կրեմային հրուշակեղեն և այլն / և փափուկ պաղպաղակի բացօթյա վաճառքը, եռամսյակային ստուգումներ են կատարվել համայնքում գործող առևտրի կետերում: Համայնքում գործում է 8 առևտրային օբյեկտ:
- 2018թ.-ին պետական միջոցներով ասֆալտապատվեց Նորապատ- Արաքս ճանապարհը:

Համայնքի ղեկավարի գործունեությունը կրթության , մշակույթի առողջապահության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում .

- Գյուղապետարանի նախաձեռնությամբ կատարվել է տարբեր միջոցառումներ՝ մայիսյան տոների , առաջին զանգի, վերջին զանգի , ամանորյա, ցեղասպանության ;
- Համայնքի ղեկավարը աջակցել է համայնքի կարատեի խմբակների գործունեությանը :
- Դպրոցում կազմակերպվել է սպորտային միջոցառումներ:
- Համայնքի ղեկավարը սպորտի բնագավառում կազմակերպել է ընկերական ֆուտբոլային հանդիպումներ հարևան գյուղերի թիմերի հետ:
- Համայնքում գործում է մշակույթի տուն, որտեղ համայնքի ողջ ազգաբնակչությունը սպասարկվում է անվճար թենիս, բիլլարդ , շախմատ, շաշկի:
- Համայնքում գործում է բուժամբույլատորիա :Կատարվել է համայնքի 3 բնակչի վիրահատություն պետ. պատվերի շրջանակներում:

Համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում.

- Կատարվել է բոլոր սեփականատերերի կողմից հաստատված նորատունկների և քանդումների ակտերը հաստատված մարզպետարանի կողմից:
- Համայնքի ղեկավարը իր աշխատակազմի միջոցով կազմակերպել է համայնքի բոլոր տեսակի ցանքատարածությունների, այգիների չափերի վերաբերյալ ամենամյա հաշվետվություն անասնագիտաքանակի հաշվառման , անասնաբուժական ծառայության , հակահամաճարակային , կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ.
- Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքները, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքներ:

- Համայնքի 2018թվականի սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 84 %-ով տարեկան 13186.0 հազար դրամից հավաքվել է 11092.0 հազար դրամ, այդ թվում ` հողի հարկ տարեկան պլան 8561.0 հազար դրամից հավաքագրվել է 6080.0 հազար դրամ 71%, հողի վարձ` 300.0 հազար դրամից 262.0 հազար դրամ 87 %, գույքահարկ` 3375.0 հազար դրամից 4371.0 հազար դրամ 130%, տեղական տուրքեր` 100.0 հազար դրամից 80.0 հազար դրամ 80%, այլ եկամուտներ ` 250.0 հազար դրամից 300.0 հազար դրամ 120%:

Համայնքի առաջ ծառայած հիմնախնդիրներ.

- Մշակույթի տան և մանկապարտեզի վերանորոգում.
- Ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում.
- Խորքային հորերի վերանորոգում.
- Գյուղապետարանի վերանորոգում:

ԱՐԱՔՍ /ԱՐՄ/ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ`

Ռ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ